# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 2
Հեռախոս (0286)4-34-23

**Թիվ 190**
*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան,

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 8-ը դեկտեմբերի 2016 թվականի N34-Ա, N35-Ա, N36-Ն, N37-Ն, N38-Ն, N39-Ն, N40-Ա, N41-Ա, N42-Ա, N43-Ն, N44-Ա, N45-Ա, N46-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

*Կատ.՝ Լ. Մեժլումյան*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՈՒՏՔ № 9899
16 12 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

8 դեկտեմբերի 2016 թվական N34 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

**որոշում է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N4 նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության արոտավայրերի և հատուկ պահպանվող տարածքների հողամասերից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար հողամասից սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրմանը համաձայնություն տալու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 17-ի N29-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2017 թվականի օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի կողմից 2017 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն 2017 թվականին օգտագործման տրամադրելու և օտարելու, հրապարակային սակարկությունների վարձավճարների և օտարման մեկնարկային գները հաստատելու մասին:

6.«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի

Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 10-ի N23-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

7.«Մեղրիի արվեստի մանկական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N61-Ա որոշման N1 հավելվածը ուժը կորցրած ճանաչելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N9-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

9.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017 թվականի բյուջեի նախագիծը հաստատելու մասին:

10.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 17-ի N25-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

11.«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր – Հայաստան: Տարածաշրջանային խորհրդատվական Խորհուրդ-Արևիք» Խորհրդի կազմում ընդգրկելու նպատակով խորհրդատվական խումբ ձևավորելու և խմբի անհատական կազմը հաստատելու մասին:

12.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ընդգրկվելու համար Մեղրի համայնքի ոչ պետական հատվածի ներկայացուցիչ առաջադրելու մասին:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 8
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*8 դեկտեմբեր 2016 թվական N35-Ա*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N29-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի դրույթներով, «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշման 76-րդ կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին N16-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2016 թվականի ապրիլի 2-ին տրված «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության» ԵՀԹ-29/219 թույլտվությունը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին*

*որոշում է՝*

*1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության արոտավայրերի հողերից 31.8802 հա և հատուկ պահպանվող տարածքներից 1.8333 հա հողամասերը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար, հողամասից սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/, երկու տարի չորս ամիս ժամկետով, տրամադրելու «ՆԱՐԻՊՐՈՖ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սահմանելով տարեկան 504000 (հինգ հարյուր չորս հազար) ՀՀ դրամ վճար:*

2. Համայնքի ղեկավարին՝ համապատասխան եզրակացություն ստանալ[illegible] օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական գործ և ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետին:

3.Չեղյալ ճանաչել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության արոտավայրերի հողերից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար հողամասից սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրմանը համաձայնություն տալու մասին » N29-Ա որոշումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 8
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2016 թվական N36-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, 30-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ- 0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

**որոշում է՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2.Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՉԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎ[illegible] ՉԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 8
ք. Մեղրի

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

Մեղրի [illegible] 2016թ.

[illegible] 8-ի N36-Ն որոշմամբ

Համայնքի [illegible] Մ. Զաքարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ք. Մեղրի**

**2016**

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

Մեղրի համայնքի ավագանու 2016թ.

դեկտեմբերի 8-ի N36-Ն որոշման

# I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինը, աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է (այսուհետ՝ բաժին), որը <<Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառույթներ:

2.Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով՝ Մեղրի համայնքի ավագանու որոշմամբ: Բաժինը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Մեղրի համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

3.Բաժնի լիազորությունները կարգավորվում են <<Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով և իրավական այլ ակտերով:

4.Բաժինը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

5.Բաժինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և բաժնի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

# II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6.Բաժնի նպատակները և խնդիրներն են՝

1)քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների իրականացումը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.

2) տարածքային բաժնի արխիվի վարումը.

3)կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը.

4) օրենքով նախատեսված այլ նպատակներ և խնդիրներ:

# III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7.Բաժինն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները ․

1)իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի հետևյալ պետական գրանցումները՝
ա) ծնունդը.
բ) ամուսնությունը.
գ) ամուսնալուծությունը.
դ) որդեգրումը.
ե) հայրություն որոշելը.
զ) անվան փոխումը.
է) մահը.
2)իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ.
3) իրականացնում է այդ գրանցումների չեղյալ հայտարարում.
4)իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի կորած գրանցումները վերականգնում.
5)իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի մատյանների վարում կամ պահպանում.
6)իրականացնում է վկայականների կրկնօրինակների ու քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումը հաստատող այլ փաստաթղթերի տրամադրում սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով.
7) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

## IV. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8.ՔԿԱԳ տարածքային բաժնի գործունեությունը կազմակերպում է Մեղրի համայնքի ղեկավարը:

9.ՔԿԱԳ տարածքային բաժնի գործունեության մեթոդական ղեկավարումն ու վերահսկողությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը:

10.Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝
ա) հաստատում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված՝ սույն օրենքից բխող հրահանգչական ցուցումներ.
բ) կարող է առաջարկություններ ներկայացնել տեղական ինքնակառավարման և իրավասու այլ մարմինների՝ ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարներին և աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.
դ)ուսումնասիրում է ՔԿԱԳ տարածքային բաժնի գործունեության դեմ ուղղված բողոքները.
ե)կատարում է ՔԿԱԳ տարածքային բաժնում գրանցման գործառույթների օրինականության պահպանման վերաբերյալ ստուգումներ.
զ)իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

11. Տարածքային բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:

12.Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և քաղաքացիական կացության ակտերի գրառումները կազմելու որակի համար պատասխանատու է բաժնի պետը և գրանցում կատարող աշխատողը:

13. ՔԿԱԳ բաժնի պետը՝
1)իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով

2)կազմակերպում և վերահսկում է ՔԿԱԳ բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ կատարումը.
3) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.
4)կատարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ցուցումները.
5) ՔԿԱԳ բաժնի աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները.
6) կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.
7) իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ.
8) ուսումնասիրում է ՔԿԱԳ բաժնի աշխատողների գործունեության դեմ ուղղված բողոքները.
9)քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.
10)ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, կայացնում համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.
11) պատասխանատվություն է կրում ՔԿԱԳ բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.
12) վարում է համապատասխան տարածքային բաժնի արխիվը .
13)օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրում է տեղեկատվություն կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ.
14)աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում բաժնի համայնքային ծառայողների նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժերի միջոցներ կիրառելու մասին առաջարկություններ.
15)Մեղրի համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվետվություն բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.
16) պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.
17) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

14.ՔԿԱԳ բաժնի աշխատողը՝
1) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների ժամանակին, լրիվ և ճիշտ կատարումն ապահովող անհրաժեշտ աշխատանքներ.
2) կատարում է ՔԿԱԳ բաժնի պետի ցուցումները և հանձնարարականները.
3) պատասխանատվություն է կրում իր առջև դրված խնդիրների լուծման համար.
4)իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ.
5) բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ, վկայականների, տեղեկանքների, ակտային պատճենների և այլ փաստաթղթերի տրամադրման գործավարություն.
6) իր լիազորությունների շրջանակներում վարում է բաժնի արխիվը.
7)բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

8)իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.
9) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
10)բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները.
11)բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
12)իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
13) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 դեկտեմբերի 2016 թվականի N37 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20 հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ 11-րդ և 13-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-11, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

**որոշում է՝**

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2017 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2017 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4-ի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԱՇՈՏ
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՆՍՏԱՆՍ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 8
ք. Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում սահմանվում է տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար.
2. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար.
3. համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.
4. համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար.
5. համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.
6. համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար.
7. համայնքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.
8. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար.
9. համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
10. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար.
11. համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
12. համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
13. համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.
14. համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար.
15. համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված 2
<< Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2016թ.դեկտեմբերի 8-ի թիվ 37-Ն որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

2) սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ:

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1)» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի «1.» կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ.
բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ.
գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 20000դրամ.
դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ.
ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ.
զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000դրամ.
բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000դրամ.
գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000դրամ.
դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000դրամ.
ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 40000դրամ.
զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000դրամ:

5. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է տարեկան 50000դրամ:

6. Համայնքի տարածքում

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 180000 դրամ.

3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 40000 դրամ.

4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

**<u>հիմնական շինությունների ներսում՝</u>**

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ.

**<u>ոչ հիմնական շինությունների ներսում՝</u>**

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար ՝ 8000դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ:

Մեղրի համայնքի Լիճք, Տաշտուն, Վարդանիձոր, Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար, Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր, Այգեձոր և Թխկուտ բնակավայրերում ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տեղական տուրք վճարողների համար սահմանել արտոնություն՝ վճարման ենթակա տուրքի 90%-ի չափով:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, [illegible] (սաունաները), վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 40000 դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60000դրամ
3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ 700000 դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 350000դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 150000դրամ.

8. Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի քաղաքային բնակավայրերում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000դրամ.
4) Սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1քմ դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝ 250դրամ.

11. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքային բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ 100դրամ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

12. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000դրամ:

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000դրամ:

14. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 10000 դրամ:

15. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2016թ.դեկտեմբերի 8-ի թիվ 37-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ.
2. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար.
3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար.
4. շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու
2016թ.դեկտեմբերի 8-ի թիվ 37-Ն որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 20000դրամ:
2. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանվում է՝ մասնակիցներից վճար 3000դրամ:
3. Համայնքի տարածքում աղբահանություն կազմակերպելու և իրականացնելու համար աղբահանության վճար սահմանվում է՝
   1) կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 400 դրամ.
   2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000դրամ:
4. Համայնքի տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 դրամ:
5. Սահմանվում է զեղչ.
   աղբահանության վճարը Ագարակ և Մեղրի քաղաքներում հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 150 դրամ, համայնքի գյուղերում հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 250դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

8 դեկտեմբերի 2016 թվականի N38-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ

